Հավելված N 2
2026 թվականի հունվարի 23-ին կնքված
1032-11002/2026-ԱՀԵՏ4 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Երևան – 4 (Կենտրոն, Նորք Մարաշ) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026 – 31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026-30.06.2026 |
| Ներկայացման օր | 03.07.2026 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:32:31 AMT

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են՝

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 74 շահառուի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 15 դեպքի վարում՝ տարեկան վերափաստագրման 13 դեպք, 1 շահառու՝ նոր անձնագրի ստացում, 1 շահառու՝ աջակցող պարագաների ստացում: Եռամսյակի ընթացքում սոցիալական աշխատողը իրականացրել է թվով 11 միջնորդում և ուղղորդում, այդ թվում 2 շահառուի համար դիմում է ներկայացրել կենտրոն վարչական շրջան աղբահանության զրոյացման համար: 1 շահառուի համար՝ «Հայ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ՝ հոսանքի գերածախսի առաջացման պատճառը պարզելու նպատակով: 1 շահառուի համար ՄՍԾՏԿ-ում կատարվել է ԾԱԾ-ի փոփոխություն, 1 շահառուի համար սոցիալական աշխատողը փորձել է ՄՍԾ Կենտրոն ՏԿ-ից պարզել երկար տարիներ նույն աշխատավայրում աշխատելու դեպքում թոշակի բարձրացման հավանականությունը, 2 շահառուի համար սոցիալական աշխատողը «Օրոտ» կազմակերպությունից գումարային աջակցություն ստանալու վերաբերյալ միջնորդել է համապատասխան փաստաթղթերը շահառուներին ներկայացնելու, դրանք ստորագրելու և կրկին վերադարձնելու հիշյալ կազմակերպությանը: Սոցիալական աշխատողը 1 շահառուի դիմում-խնդրանքով առողջապահության նախարարության պահեստից ստացել է հաշմանդամի սայլակ և հանձնել շահառուին՝ ժամանակավոր օգտագործման համար: 1 շահառուի համար անձնագրային բաժանմունք է ներկայացվել միավորների տեղեկանք՝ անձնագրի համար նախատեսված պետական տուրքը չվճարելու նպատակով: 2 շահառուի համար սոցիալական աշխատողը շահառուի բջջային հեռախոսի մեջ ակտիվացրել է բանկինգ ծառայությունը, ինչպես նաև 1 շահառու համար բանկից ճշտել ԽՍՀՄ տարիներին թողած ավանդի հետ վերադարձի ներկայիս փուլի մասին և տեղեկացրել շահառուին: Թվով 7 շահառուների համար կատարվել է գնումների և վճարումների իրականացում՝ կոմունալ վճարումներ, բջջային հեռախոսի լիցքավորում, ինտերնետ կապի վճարում: Եռամսյակի ընթացքում սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 5 ուղեկցում, այդ թվում՝ 2 շահառուի ուղեկցում բանկ՝ կենսաթոշակի քարտը ստանալու նպատակով, 1 շահառուի ուղեկցում «Հայ Փոստ» ՓԲԸ ՝ նոր բջջային քարտ ձեռք բերելու նպատակով, ինչպես նաև «Արդշին» բանկ՝ ՌԴ-ից փոխանցված գումարը ստանալու նպատակով, 1 շահառուի ուղեկցում «Պլանտա Սանա» ՍՊԸ՝ բժշկի հետ խորհրդատվության և «Բարի Ծրեյդ» ՍՊԸ օրթոպեդիկ պարագաների խանութ՝ շահառուի համար աջակցող պարագաներ ձեռք բերելու նպատակով: 1 շահառուի ուղեկցում «ՎՏԲ» բանկ՝ ՄՍԾ-ում ավանդի ստացման համար անհրաժեշտ տեղեկանքը ձեռք բերելու նպատակով: 1 շահառուի ուղեկցում անձնագրային բաժանմունք՝ նոր անձնագրի ձեռքբերման համար:

Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 7 շահառուի հոգեբանի կողմից պարբերաբար տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն /36 անգամ/, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:

Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:

Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 16 միջոցառում, որոնց մասնակցել է թվով 2 շահառու մասնակցել են հետևյալ մշակութային համերգներին՝

1. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊՄՆ:
2. Արամ Խաչատրյան համերգասրահ,ՀԱՖՆ, «Հովեր» երգչախումբ:
3. Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Կոլեկտիվը ՀՊԿՆ, Վիվալդի և Պագանինի ստեղծագործությունները:
4. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀԱՊՆ հերթական համերգ:
5. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀԱՖՆ-ի համեզը եվրոպական հյուրախաղերից առաջ:
6. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀԱՖՆ-ի հերթական համերգը, մենակատար Եվա Գևորգյան:
7. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊԿՆ-ի համերգը ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում:
8. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊԿՆ-ի հերթական համարը:
9. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊՄՆ
10. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀԱՖՆ-ի հերթական համարը:
11. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն «Զավեշտալի կատակերգություն հյուրանոցում» ներկայացումը:
12. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊՄՆ, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի բացման համերգը:
13. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊՄՆ, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի բացման համերգը:
14. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊՄՆ, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի փակման համերգը:
15. Արամ Խաչատրյան համերգասրահ, ՀՊՄՆ, Բեթհովեն-ի 7-րդ սիմֆոնիան:
16. Ղափլանյանի անվան դրամադիկական թատրոն «Տիկնայք և պարոնայք» ներկայացումը:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 74 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 74 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի

պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 42 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 4 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 18 շահառու եռամսյակը մի քանի անգամ ուղեկցվել են բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, այդ թվում նեղ մասնագետների մոտ, «Ավագյան» կենտրոն, «Վարդանանց» կենտրոն, «Էրեբունի» ԲԿ, «Աստղիկ» ԲԿ, շահառուներ կան: 19 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային կանչ՝ բժշկի կողմից շահառուի զննություն իրականացնելու նպատակով, 6 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական): Թվով 5 շահառուի համար կատարվել է վերքի մշակում, վիրակապում: Թվով 12 շահառուի համար առցանց ուղեգիր է կախվել Արմեդ հարթակում: Թվով 8 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ, 13 շահառուի համար իրականացվել է հետազոտությունների կազմակերպում, 5 շահառուների համար՝ անալիզների հանձնում, թվով 10 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ (շարունակական), թվով 7 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է բժշկական քարտից քաղվածք, թվով 37 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութերը.

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Կենտրոն վարչական շրջանը սպասարկող սոցիալական աշխատողը և թիմ լիդերը ՄՍԾ Կենտրոն և Նորք-Մարաշ տարածքային կենտրոնում մասնակցել է խորհրդատվական նիստերին և եռամսյակային ֆորումներին:

- ✓ «Նոնենի» համայնքային կենտրոնի պատասխանատուն և հոգեբանը Արմավիր մարզում մասնակցել է «ՖՄԴ հանրայնացում և զարգացում»՝ «Անձի ֆունկցիոնալության գնահատում. օրենսդրություն, միջազգային մոտեցումներ և գործիքներ» վերապատրաստման դասընթացներին «Հավասարություն և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագրի շրջանակում:
- ✓ «Նոնենի» ՀԿ-ի թիմ լիդերը և բազմամասնագիտական թիմը մասնակցել են ՓԻՆ-ի «Անձի Ֆունկցիոնալության գնահատման համակարգը» թեմայով առցանց հաղիպմանը:
- ✓ «Նոնենի» թիմ լիդերը և բազմամասնագիտական թիմը մասնակցել են «SPHERE ընթացակարգեր, սեռական շահագործման, բռնության, հետապնդման կանխանգելում և վարքագծի կանոնագիրք» դասընթացին, որը կազմակերպվել էր «Էյ Էս Բի» կազմակերպության կողմից:
- ✓ «Նոնենի» թիմ լիդերը Աշխատանքի և սոցիալական նախարարությունում մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի և Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «ՖՄԴ հանրայնացում և զարգացում» ծրագրի շրջանակում մշակված՝ ՖՄԴ հիմքով համապարփակ գնահատման և անհատական աջակցության պլանավորման գործիքակազմի ներկայացման և քննարկման նպատակով կազմակերպվող հանդիպմանը:
- ✓ «Նոնենի» ՀԿ-ի թիմ լիդերը և բազմամասնագիտական թիմը առցանց մասնակցել են «հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքները» թեմայով դասընթացին:
- ✓ «Նոնենի» hկ-ի խնամքի պատասխանատուն և բուժքույրերը Ամերիկյան համալսարանում մասնակցել են «Նոր դարաշրջանի բուժքույրական գործ» թեմայով կոնֆերանսին:
- ✓ «Նոնենի» թիմ լիդերը և հոգեբանը Ակնաշենի փոքր տանը մասնակցել են «Արտակարգ իրավիճակներում ՀՈՒԱ ներառական արձագանքման պլանների մշակում և փորձարկում» դասընթացին:
- ✓ Եռամսյակի ընթացքում «Նոնենի» hկ հոգեբանը մասնակցել է 4 ժամ խմբային սուպերվիզիայի՝ սեփական նախաձեռնությամբ:
- ✓ Եռամսյակի ընթացքում Նոնենի» hկ հոգեբանը մասնակցել է 9 ժամ հուզական այրումը կանխարգելող բալինտյան խմբային աշխատանքի՝ սեփական նախաձեռնությամբ:
- ✓ Եռամսյակի ընթացքում Նոնենի» hկ հոգեբանը մասնակցել է 2 ժամ անհատական սուպերվիզիայի՝ սեփական նախաձեռնությամբ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 74/74 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 65 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 66 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 4<br>Բ - 70 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 74 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 74 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 74 |
| 5.1 | այդ թվում՝ թվով 16 մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 2 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 26 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն /36 անգամ | 7 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07. 2026թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)